


Հ Ա Ս Յ Ի

Rédaction du Journal arménien
ARCHALOUYCE
(EGYPT) LE CAIRE



ՊԱՏՄԱՆՔ

ԵՊԻՊՏՈՍ
Տարեկան դր. սոլ 30
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Տարեկան ֆրանկ 10

Բաժանորդ 3ԱԵԼՈՒՄ Երև. փոխարէն
վճարումէ գերծ պիտի ըլլան .

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԻ ՀԱՅԱԹԵՐԹ

Չի հրատարակուած ձեռագիրները
ևս չեն տրուիր :
Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ
ծանուցումները կ'ընդունուին մասնա-
ւոր հաւանային տրուելով :

Թի՛ ԱՐՇԱՆՈՅՍԻ եւ թի՛ ՏՊԱՐԱՆԻՆ
վերաբերեալ նիւթական խնդրոց հասար
պեօք է դիմել նիւթագրութեան հասցեոյ
թերթիս Մասնատարին, որ է՛

ԳԵՌՈՐԴ ՓԱՓԱԶՆԵԱՆ

ՀԵ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԱՐԹԻ ՕՐԵՐԸ
Յօդուածագիրները չպարտաւորուած
են իրենց գրածներէն
ZUSC 20 ՓԱՄՈ ՈՂԸ

ԱՍՈՆՔ ԵՒ ԱՆՈՆՔ
ԻՄԱԳԱԿԱՆ ՄՈՒՆ

Մինչև ցարդ տակաւին Միւս-
թեան թուանշաններովը չ'ըրազեցայ-
բան մը՝ որ Հ. Բ. Ը. Միւսթեանը
երկինք պիտի բարձրացնէր, բարդա-
տելով անոր ելեմուտը հայ կու-
սակցութանց, մանաւանդ Ամերիկա-
յի (քա՛ւ լիցի) « Կրամայորդ » ներու-
ն առարկայի անհոյս կեանք, որուն
տակը գծադրաբար ծակ է եղեր՝
իմ գրականիս պէս . . . , որ՝ հինգ
դր. ուղը - եղիպական դրամ -
իրարու քով դրած չ'հանդիպեցայ
օր մը, հակառակ որ ոմանք կը կար-
ծէին թէ՛ ամիսը 50 ոսկիէն աւելի
կը շահիմ . . .

Ողբացեալ Արիփարեան՝ - իր միւս
բոլոր թերութիւնները կը մոռնամ
հիմայ - երբ իր կեանքին գնով պայ-
քարը սկսաւ « Կրամայորդ » աւա-
զակներուն դէմ, 50,000 տոլարի
- 10,000 երկրպա . ոսկի - յուժպէտս
մտնուելը մասնացոյց ըրաւ : Ինքը
ինծի բերանացի ըսած է թէ՛ իսկա-
պէս մտնուած գումարը ո՛չ թէ 50
հազար՝ հազար շատ աւելի էր :

Բայց այս թիւերը նշանակութիւն
չունին, քանի որ անհետաքրքիր
աղբասէր հայ գործաւորներուն գր-
պաններէն՝ անոնց աղբասիրական ե-
ռանդը չարաչար գործաճեղձով քայ-
ուած և ոչնչացած է յաւիտեանայէս :

Արչակ Չօպանեան, որ կը մե-
ղադրուի հիմայ թէ՛ գրամայորդ-
խմբակին գործերէն իրստ մօտէն
տեղեկութիւն ունի - ինչ որ ես շատ
չեմ հաւատար, և չ'հաւատալու
ալ բանաւոր պատճառներ ունիմ . . .
ասկէ առաջ ըսած էր « Անահիտ » ի
էջերուն մէջ թէ՛ գրամայորդ խմբ-
ակին՝ ու եթէ կուզէք որ քիչ մը
աւելի համարձակ ըլլամ « խմբակ-
ներուն » ըսելու չափ, անտուկնե-
րէն անդիմ մը անգամ Հայաստա-
նի գծադրներուն զրկուած չէ . այն
ասան ինքնին երեսն կուգայ Հ. Բ.
Ը. Միւսթեան վե՛մ . Ատենայեան
Պօղոս բաշային և զայն շուրջ պա-
տողներուն ճշմարիտ հայրենասիրու-
թեան չափը :

Ամեն ազգի մէջ ալ մեծ ու
փոքր անտեղեկութիւններ կ'ընան պա-
տահիլ . արթուն մտալ՝ և լաւը գէ-
շէն զանազանել զիսնալու է :
Փրանսացիները ընդհանրապէս
աղբասէր և խանդոտ ժողովուրդ մը
ճանչցուած են ուրիշ ազգերէ, բայց
ասկէ 5 տարի առաջ, բարեկամս՝

Մելիք Ս. Դաւիթ բէկ, որուն ճայ-
նը չեմ գիտեր ինչո՞ւ խափանած է
հիմայ, Բարդիէն հրատարակելի տե-
ղեկագիր մը կը զրկէր մեզի, որուն
միջոցաւ կ'ըսէր թէ՛ Փրանսայի մէջ
արական և իգական սեռէն 400,000
բողոքածներ և արայներ գոյութիւն
ունին : Ահաւրի թիւ մը՝ որմէ ոչ
մէկ հատը պատուաւոր կարելի է
նկատել, բայց այսու հանդերձ Փր-
անսայի համարը ասոնց աղբեցու-
թեանը ներքև նսեմացած չէ բոլոր-
ովին :

Նոյն բանը կրնայ պատահել և
մեր մէջ : Հայութիւնը ճարպիկ ու
գործունեայ և պատուախնդիր ազգ-
մը ճանչուած է . ու անոր մէջ դեռ
նոր ծլած քանի մը գարշաւոյր ծա-
ղիկներ մի՛ թէ ընդհանուր ազգին
վերագրուած ընտիր յատկութիւն-
ները կրնան նսեմացնել : Միայն թէ
որովը իր ժամանակին մաքրել և
զտելու է . . .

Հոս մարդարութիւն մը ընել
անպատեհ չէ : Հ. Բ. Ը. Միւսթեանը
որ զուտ Հայկական է, եթէ օր
մը պատահի որ տեղի տայ կուսակ-
ցական շարժապիտութիւններու առևձ,
« ո՛հ ա՛յնատեն ես կը մեռնիմ » ինչպէս
ըսած է վաղամեռիկն Պ. Կուրեան,
ու ինձմէ յետոյ ալ Հ. Բ. Ը. Մի-
սթեանը . . . կը մեռնի :

Բայց գեռ նոր ծնած մեռնելու
վրայ խօսիլը բարի նշան մը չէ . կ'ը-
սեն մեծերը . ուստի հիմապէս հիմայ
ապրելու վրայ մտածենք, Ազատու-
թեան նորածագ արշալոյսին բիւր
բարիքները վայելելու համար :

Իսկ ապրելու համար անպատճառ
հաշիւներով զբաղելու է, ինչպէս
« Ռայմիկ » ի Խմբագիրը Պ. Աուրէն
Չարդարեան, իսպառ մոռնալով Խար-
բերդը, ու հոն տեղի ունեցած ա-
խարժեղի պատահարները գիշերաչին
. . . , Օրմանեան Պատրիարքէն 100
Փր. ի մը հաշիւը կուզէ, ու Իւս-
կիւտացի Օրբիորդ մ'ալ 130 ոսկեոյ
խնկելի ստացականաւ մը՝ նոյն բա-
նը կ'ընէ, ինչպէս ըրաւ Տիկին . . .
մայր մը ասկէ առաջ « Ես ախարժիս »
ըսուելու չափ հին Կահիրէի Կազա-
քական ժողովոյ մը առևձ, ու՛ր
մեծածուրէ կը բաղմէր արդարու-
թեան ախարժեանը վրայ՝ Ասյան-
եան Բիլիթ . . .

Օ՛հ, շատ հեռացայ նիւթէս,
բայց մի՛ մեղադրէք : Իմ նպատա-
կըս էր այսօր քննել Հ. Բ. Ը. Միւս-
թեան տեղեկագիրները, ու հիմայ,
տեղոյ անձկութեան պատճառաւ՝
սիրտուած եմ յաջորդ թերթին թու-
ղուլ ըուն ըսելի ընելու :

Մ Ա Ն Չ Ո Ւ Մ Է Ի Է Ֆ Բ Ե Ա Ր
ԹԻՒ 2220

ՓՈՔՐԻԿ ՀԱՐՑՈՒՄ ՄԸ
ԵՂԵՆ ԿՐԴ. ԶԻԼԻԿԻՐԵԱՆԻ

Լուսահոգի Գեր . Տէր Աւետիք Ե-
պիսկոպոս Երևանեանը՝ Երուսաղէմի
Նախորդ Կառավարիչ Վ. Բէշիտ Պէյին
մատնողը դո՛ւն է իր թէ Աւետիքը :
ՊԵՏՐՈՍ Ա. ՄԻՆԱՍԵԱՆ
Պէյրուս 908 Սեպտ. 6

Ծան . Խմբ. - Երկուքն ալ : 120
բունդօ տառերով կարդալ : ՏԿՍ « Ար-
շալոյս » թիւ 508-36 Պէյրուսէն Ա. ՉԱ-
ՏԱԿԱՆ ին նամակը :

Ն Ա Մ Ա Կ Պ Է Յ Ր Ո Ւ Թ Է Ն

ՓՈՔՐԻԿ ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

Առ Գերապ. Տ. Մկրտիչ
Մ. Վ. Աղաւաղուի Առաջնորդ Եպիսկոպոսի
Իրա՛ւ է որ դուք ժամանակին Ե-
զրպոստի մէջ ժողով գումարելով. Երու-
սաղէմի վանքին մէջ պղծուած աղջիկ-
ները ժողովի կանչած, և անոնց՝ ո՛չ
թէ վարդապետներու կողմէ, այլ 80ամ-
եայ ծերունիէ մը պղծուած ըլլալը հաս-
տատող տեղեկագիր մը զրկած էք Ման-
կունի եպիսկոպոսին :

Կը խնդրենք որ այս մասին փոք-
րիկ լուսաբանութիւն մը տաք « Արշա-
լոյս » ի միջոցաւ :
Մնամ
Ա. ՉԱՏԱԿԱՆ ՄԸ
Պէյրուս 23 Սեպտ. 908

Ն Ա Մ Ա Կ Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Է Մ Է Ն

Ո՞Վ Է ԳՈՂԸ, Ո՞Վ Է ՄԱՏՆԻՉԸ

Գրեթէ 5-6 տարիներէ ՚ի վեր Սա-
ղիմական լուրը ու պատկանելի Միաբա-
նութեան մէջ անմիաբանութիւն մը տի-
րած է . հոյակապ հաստատութիւն մը,
լուսեան հայ ուստիին փառքը ու անձ-
նութեան ինքնը բարոյազ առնու՛ր՝ որ
ամէն հայորդեոյ ճակտէն թափուած քր-
տինքի արդիւնքով, ցարդ պահուած է՝
աւա՛ղ որ, սխալաճաշակ ու շահախնդիր
ոմանց՝ մի քանիներու երեսէ, չ'ըսեմ
երես ըսելէ զուրկ երեսներու երեսէ,
այսօր՝ Ս. Յակովբեանց վանքը՝ որ բո-
լոր ազգաց նախաձը շարժելու առար-
կայից էր՝ Փրկչին ծովու վրայ պա-
տահած խռովեալ նաւակը գարձած է :
Տարբարող նա՛ւ, որ բու ներքեւ պատա-
հած ալեանք բռնութիւններն, անգո՛ւթ,
անողորմ մասնիչներու, սրբապիղծ Ման-
կունիներու, առաւ քաղց Գեճեան-
ներու, լրբագոյն քուլուարանի Մաթէոս
վարդապետ Գայգեանի ու կուսակից

Դա՛ւ - ՚ի՛ թ Տէրտրեանի . Սարգիս Վ.
Աճէմեանի, ու Վ. Դասապեանի, հա-
ղարներու տէր եղող վայրագ սպասա-
ւոր Աւետիսի ուղեղէն ծնան այդ փոթո-
րիկներն . . . :

Աւա՛ղ. այս խաղաղ և երբեմն ալ
բարոյական բուրաստան վանքին՝ որ
քիչ ժամանակի մէջ 10,000 ոսկի պարտ-
քը 30,000ի անդուեզ զլորեցին, և իր
բարոյական անուէն . . . զրկուելով՝ պղ-
ծուեցանց գահավէժէն զլորեցաւ :

Ո՛րք ոմանք էին հեղինակներն,
անոնք որ արդարը հլորը . . . կապիցին
ու ապա աւար գործեցին՝ Աւետարանի
ճշմարիտ պաշտօնեանք՝ ըլլալուն . . .
Աւետարանի ոչխարի զգեստով գայլ բզբ-
արիչ պաշտօնեաներ, որ հրէշներու և
Սրբապիղծ մանկունիի ազոտ փէշին
տակ մտած և անոնք ալ յազո գիւտակով
վանքասէրներու փէշին տակ մտած՝ ան-
խնայ գործեցին ու քանգեցին՝ մինչև և-
հիմը հասցնելու ուստով : Ո՛հ ճիւղա-
յին հրէշութեանց . պատկառելի և ար-
գիւնաւոր բազմապատակ Արի-Եպիսկո-
պոսաց կեանքերու չը խնայեցին, վարդա-
պետները ծեծելով ու տանխնայեցին վար-
ձը ձգելով զերեզման զրկեցին, անմեղ ու
անպարտ վարպայետ ու Սարկաւազներ
միաբաններ մատնելով ու զրպարտելով
աքորանքներու ու բանտերու խորը
նսեմ առելին վեղարնին ՚ի գլուխ, շըր-
թայակապ Հմայեակ մը մինչև Հաղպ-
զիւտով տարագրեցին ցուրտ և ձմեռ
զիշերով, ամբարի՛շտ, անգութներ,
գէթ այդ անմեղ վարդապետին արտա-
սուքներուն խնայեցիք . . . : Կուսապղ-
ծութիւններ . Մանկունի 100 ոսկիով
ամեն ճշմարտութիւն ուղեց ծածկել,
բայց այսօր կաշառակեր Մանկունիի դէմ
կը բողոքուի դառնապէս :

Այս անուր ոճերներ գործեցին
խմբակ մը՝ վանքասէր զիմակին տակ,
որոնց զլուխն էր և է՛ Ենիջիլի աղաւթ
հայհոյիչ, ստախոս ու խաբեբայ, մի-
աբանութիւնը կեղծ բարեկամութեան
տակ իրարու դէմ լարող ու ձգող և հե-
ռուէն խնդացող վա՛տ Գայգեան, սրի-
կա՛յ միայնգամայն, որ կը տառապի Պէյ-
րութի հանրատուները վաստակած Գայ-
ղիական « ֆիւնիկ » ախտով, երբեմն ալ
վեղարը վրայ տալով . . . ի Սեղովամ :
Ժամանակը բարերար է, և ունի
արդար ու հզոր ձեռքեր անբեաններու երե-
սէն զիմակը վար առնելու . . . ու գոր-
ծելու . Ո՞վ բարերար ժամանակ, ուրեմն
. . . գործէ՛ :

Ախտո՛ս որ կոյր միաբանութիւն,
բայց ճնշու՛ած, այդ շատակեր ու հայ-
հոյիչ քուլուարանի Գայգեանի ինչ ան-
նկարագիր և խաբեբայ մէկը ըլլալն
չին ստոված : - Գայգեանի այսօրուան
իրմէն պաշտուած բարեկամը՝ վաղը գող
մը, սրիկայ կըլլայ՝ իր շահուն չգալուն
ու Տաւուրը չը շալուուն համար . . . :
Գայգեանի Մաթէոս աղա՛, էֆէն-
տի՛, և այսօր ալ Գոնէ մը . . . « Վան-
քի 30,000ին մէկ մասը գրպանած է, իր
անելի՛ փորին հետ քսակն ալ ուռե-
ցուցած » Պէյրութի և Եսֆայի տեսչու-

Ե. ՅՈՐՈՍԵԱՆ

Թեանը՝ վանքեր մերկացուցած ու իր սուներ տարած է եւ մէկ շապիթով Պոլսէն վերադարձած, շինութեանց ծախքեր ընելով՝ հազարներ չորթած է՝ իր սնանկացած եղբայրներու նպաստելու: 10 մինչեւ 20 երթասարգներ Պէյրութի եւ Եւֆրատի նաւահանգիստներն բոլորեցու մասնած է, եւ անոնք որ քանի մը ոսկիներ կը ցնծային Գալղեանի ու իր ճանչցած բոլորներու մասնութենէ կը փրկուէին: « Հայ հանրութեան ուշադրութիւն կը հրահանուի ոչ ոք մասնիչ եւ զո՞ք սրկային վրայ, եւ իր համախոհներուն՝ որ սակէ քանի ամիս առաջ պատուանշաններով վարձատրուեցան՝ շնորհիւ կենցաղ փայտին մէկ մասին, որ զեղծարար Մանուկեանի Եպիս. ի միջոցաւ Պոլսի կաշառ զրկուեցաւ երբաւորութեան էջ. կենցաղ վրիճ կախուցու: Ամեն. Իզմիրեան Սրբազան՝ որ զինքը չողորթութիւն համար աստուածացուցին, եւ ինք ալ սրկով ընդունեց, երբ Պէյրութ կը ժամանէ, ճո՞խ սեղանի մը վրայ իրեն զէմ ժամանակի բերմամբ եղած ցոյցերէն շլացած, իր բաժակահատին սա՞ խոսքերը կարտասանէ. « Երուսաղեմայ վանքը երեք սրկներ ունի, Մաթթեոս Գալղեան. Մ. Եղան. Կան եւ Գաթիկ Տէրութեան »:

Այո՞, բերանը Ամեն. Իզմիրեան Սրբազանին է որ մտնէ չնամչցած բարեկամներու անունը փաստացի փաստ կրնայ բարձրացնել, բայց զոչը չը խաբուիք քանի որ ազգը մասնակ խելքի չի ծառայէր եւ անոնցմէ չէ չողորթութեամբ որ ինքըն ալ պանծնք չողորթութէ . . . :

Ս. Յակոբեանց վանքը սրտով, խղճով եւ հոգեով փրկած կալ զրուի փայտէ սրկներու պէտք չունի, որ այս սուներ Սամսոնի պէս ազգին զլխին փլցնեն: Միտաղիի՝ սրկներ, արգանատելի զերաններ, որոց սերբը մի միայն քար է . . . որ քանի մը տարուան շրջանին մէջ 10,000 ոսկի պարտքը 30,000 բրին իրենց խնկարկող անօթի մասնիչներուն տալով . . . Գաթիկ, որ քանի՞ քանի՞ անգամներ Ս. Յակոբեանց Մայր տաճարին մէջ կոխուներու ծնկը վրտուկներու տեղի տուած էր, եւ վերջերս ալ զաղանարար ճերմուի 40 տարուան Սամուէլ Վ. զրուին պատած, Մանուկեան սարկաւարդը ուրիշ տակ առած էր դարձեալ եկեղեցոյ մէջ ու ուխտաւորաց խումբը բաղմունքի տակ առած, որ ապա յանկուսի քարտեղին: Եւ միջէ մտացա՞ Ամեն, Իզմիրեան Սրբազան իր սա՞ ըսածը առ Գաթիկ Վ. « Ի՞նչ, միտ, բանութիւնք քեզ Լուսարարայիտ ըրաւ որ եկեղեցիին մէջ Աստուծոյ պաշտօնեաներն ձեռնե՞ս եւն եւն: Եթէ Ն. Ամենապատուութիւն իր այս ըսածներն մոռցած է՞ մենք իսպա՞ն չենք մոռցած: Գալղեան Միտաղիեան մեծամասնութեան թիւադրեց որ Մանուկեանի մասին Պոլսի բողոքանաց հետադիր մը ասորդարութիւն, եւս ալ կատարագրեմ ըսելով. բայց բողոքագրելու տեղ՝ ստորագրողներն մասնեց: Գալղեան. Վ. Վուրջ պղտը որ ուզածիդ պէս ձուկ որսաս . . . բայց որու վախճանը մտա՞ զլխուդ գալիք կայ: Օդոս. 25ին Ընդհանուր Միտաղիական ժողովը որչեց ու թողթ մը տուաւ Ս. Պատրիարք Հօր. յիշելով թէ « Ինչպէս որ Սուլթանը ամեն ոճրագործներու՝ բանաորկեաններու, աքսորեալներու ներքեւ ու իրենց տեղը գործուց, զուք ալ Փետրը Արքեպս. եւ Մարտոցեան Ղեւոնդ Վ. է սխտալ ամենու ներքեցէ՞ք ու հոս բերէք. կը խնդրենք »:

Այս որոշումը ամեն. Սրբազանը ընդունեց, բայց Գալղեանը իր արբանակներով հակադրուեցան իրենց շահերուն համար . . . Արեւմտ թող հայ գոմիթէն գործէ . . .

ԱՆՄԵՂԵՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ ԵՄ

**ՍԻՐՈՒՆ ՆԱԽԱԲԱՅԸ**

Ի՞նչ զեղեցիկ տեսարան է ան. . . կիրակի օր մը, առտուն: Պէնի-Սուրէնի հայ եկեղեցոյ փողոցը ծայրէ ծայր զբոսաշրջութեամբ է, ստանակն օրուան մը արակարգ երեւոյթը առած, ակնանձոյ, սրտատուչ, հողեպարար:

Երկսեռ բազմութիւն մը կոծակներու նման կը վազէ ճո՞ն ուր, քիչ վերջ, պիտի հանդիսանաւորակն ցուցադրուի պատմութեան մէկ գեղեցիկ էջը, դուրաւոր աստուածներու եւ արիւնի շրջանէն յետոյ հաշտութեան խորհրդաւոր պատկերը, որուն վրայ՝ նրբազնիւն մարդուն համար՝ կը նշմարուի սեւ բիծ մը, ուշացումը, սեւա՞ղ:

Ա, կամաց կամաց, այնքան ուշացած, իր ետին այնքան արիւնտա, այնքան ալքաւոր տառապանք թողած վարագործը կը բացուի: Հայ քահանայ

ներ կերեւանք բնօրն վրայ, այլազգի շէյխեր, ախարհական հայեր, Գաթիկի, բողոքական, մէծն-թուրքեր, աւրապներ, ֆրանս-մասոններ:

Եկեղեցին պահ մը շին Հռոմէացոյ. forum ի կերպարանք կառնու, ուր պիտի վճարուի մարդկութեան եւ անբութեան մէկ կենտական հարցը, այն հարցը որ երազած են փոխադրուող մարդիկներ ու բանաստեղծներ՝ երգած . . .

— Եղբարք եմք մեք . . . Աստուածաստութիւնները կակտին, հաշտութեան, սիրոյ եւ եղբարութեան ձիթեղներն բերելով մեզի:

Հաշտութեան, սիրոյ եւ եղբարութեան համարձայններ կը փոխանակուին . . .

Հաշտութիւնը կնքուած է: Եղբարք եմք մեք . . . Գաթիկ ի բարձունս եւ յերկիր խաղաղութիւն: Իցի՛ւ թէ տեւական ըլլար ան. իցի՛ւ թէ չարաստուածներ, արիւնարբու գաղաններ, չարթնան մեր հանդիսը զըրօղկու:

Ու եկեղեցիին հիմքը կը թնդան, կամարները կը զրկուան, Սփինքս, ինք անգամ, ձերացած ու մասխոյզ, կերտատարարանայ ու կարձաղանդուի մեր որտապուծ ծափերէն:

Ունկնդիրներու, 1 - 2000 ի բաղմունքին մը արանց, կանանց եւ աղջկաց, խանդավառութիւնը խօսկան է. ոմանք, յուզմունքին աստկուութեան, կուրան, ուրիշներ՝ կուրախանան այնպէս եւ այնչափ՝ որչափ պիտի ընէր ուկիտանի մերկայոյդ ալիքներէն փախած մէջը:

Բայց վերջապէս վարդաոյրը կը փակուի, այս անգամ այնքան մաքրագործուած իր հին արաններէն, սրբացած, երկնայնացած . . .

Ձեռք ձեռքի, ո՞վ զուք թուրք եղբայրներ . . .

Ս. Օ.

Եւ այս սրտայոյզ տեսարաններուն ու սիրազոյզ եւ խանդաբոր զոյցերուն մէջ ըզգմութիւնը կը մեկնի սպասուութեան մը տակ որ բաւերով չի թարգմանուիր: Ամենքն ալ ուրախ են ու ցնծալից. եւ միայն սխտը էի, հոգ չէ թէ խեղճ թաթիկներս յոյնած, կարծած են ծախքերու ջղայնութեանէն:

— Ուր են մեր Գաթիկը վարդապետները, եւ ի՞նչ պատասխանեն հիմայ մեր տաղուրտ յեղափոխական աղաքներուն, կրճէի ինքնիրենս յուզուած ու չուարած, մեկնելուս պահուն:

— Ուր են, պարոն, ձեր վարդապետները. սա ըլլալի՞ք բան է, կը հարցնէ Գաթիկեանցի պարոն մը:

— Մե՛կը, կրճէ ուրիշ մը, ի՞նչ զարու մէջ կապրիք կոր հիմա . . .

— Տե՛ս Գոյունեանը, այդ Վատիկանի աշկերտը, կը գրէ Աղէքսանդրեան թղթակից մը:

— Ինչպէս այլուր հոս ալ մեր Հայ կաթողիկէ եղբարց եկեղեցականները իրենց բացակայութեամբ փայլեցան, ըստ Հռոմեանցի բարի սովորութեան, կը գրէր վերջերս Ա. Պալեան, այս էջերուն մէջ:

Արդարեւ խիստ ցուալի է որ երբ ազգութեամբ եւ կրօնքով հազար փարսախ հեռուօր մարդիկներ մեկնողին սրբազանին մէջ կը համախոհուին, համոզուին կը փոխակերպուին, մեր եկեղեցական դասակարգը իր բացակայութեամբ կը փայլի հոն ուր հայուն նոր ճակատագիրը կը պատրաստուի:

Կը խոնարհինք այս տխուր իրողութեան առջեւ ողբալով որ կրօնական ինչ ինչ սկզբունքային խնդիրներ, աւանդութիւն, սովորութիւն զարձած բան մը, անհասկացողութիւն կամ մոլեռանդութիւն՝ ինչպէս որ կուզէք, լայն խրամասներ բացած են երկուքոր հասարակութիւններու միջեւ, երկար տարիներէ ի վեր: Լա՛ւ էր որ այդ խրամասները բնու բացուած չըլլային, մէկ ազգի գաւազները միեւնոյն կրօնի պատկանած միայն, բայց անգամ մը որ ծնունդ առած են անոնք, ինչո՞վ է մեղաւոր հասարակ զինուորը, հարմարին մը կը հնարանդի, ինչո՞վ է մեղաւոր, ներկայ պարագային մէջ, Գոյունեան Գեորգիայի մը: Ինչո՞ւ, կը հարցնեմ, մեր Գաթիկեանցի եղբայրները չի կրցան համաձայնիլ իրենց համարին Հնչակեան կուսակցութեան հետ ու կրցան հաշտուիլ մէծնթուրքներուն հետ:

Յաւելով հանդերձ իրենց ակամայ բացակայութեամբ համար, եւ չեմ մեղադրեր Հայ-Հռոմէական եկեղեցականներուն վերաբերումը, որքան ալ աղքատ ըլլայ ան մեզի պէս խորհող աշխարհակառններու համար, եւ ընդհակառակը կը սիրեմ եւ անոնց կարգապահութեան զարգումը, բան մը որ կը պակսի Լուսաւորչական Հայոց կղերականներուն քով:

Ասով չեմ ուզեր ըսել թէ մենք, աշխարհականներս, պէտք է որ քաջալերենք այդ այնքան տղազ վարմունքը, մասնաւոր երբ խնդիրը զուտ ազգային ու մարդկայնական է եւ թէ՛ մարդ իր համոզումներէն բան մը կորսնցուցած չըլլար նոյն իսկ մեզի թէ՛ մայրելով, այսպէս կամ այնպէս: Տղիտութիւն եւ մոլեռանդութիւն պիտի ըլլար հակառակը ընելով ներկայ լուսաւորումը գործուն մէջ:

Ձիւնոր մը, միայն, պէտք է որ կամ իր զէնքը ձգէ եւ կամ իր մեծին հրամանին հպատակի: Աւանդութիւն դարձած աղքատ սովորութիւն մը չէր կարելի մէկ օրէն միւսը արժանաւորիլ ընել եւ խիստ ուրախ ենք սեանել որ ցուալի խրամասները՝ որ բացուած էին երկու հասարակութիւններու միջեւ՝ սկսած են վերնալ: Պոլսոյ թիւթերուն մէջ՝ կը կարգանք որ Հայ եւ Հայ-Հռոմէական եկեղեցականներ, Միթիթարեան վարդապետներ փոխադարձ այցելութիւններ առած են պերկամասնաւորներու մէջ, հոգեհանգիստներ կատարուած են հայ նահատակներուն համար:

Ասի շատ ուրախատիթ է: Կը մնայ միայն ամբողջացնել սկսած քայլը, մարդագործել Պոլսոյ Պատրիարքարանը՝ որուն Աթոռին վրայ թաղմած է արարածիս Սողոմոնի մը, նոր, լուսամիտ եւ հայ զգացումով մնած առաջնորդներ զրկելով ուր որ պէտք է:

Եւ այս բոլորը կապուենք մեր Պոլսահայ Հռոմէական եղբայրներէն, որոնց մարտագործումը ջանքերուն սիրով ձայնակոչելով պիտի ըլլայ տեղւոյս զիտակից դասակարգը:

Եսի հայ, եւ, ապա, ինչ որ կուզէք ըլլալ:

A bon entendeur, salut!

Ս. Օ.

**ՏՈՒՐԻՍՏԻ ՏԱԼԱԼԱՐԵԱՆ**

— 0 —

Միացեալ Ընկերութեան աւժամեայ Յանձնախմբին մէջ, ի գիմաց Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան, պաշտօնագրէս յայտարարեց թէ՛ յիշեալ մարմինը առ այժմ տարեկան 100 ոսկի կը դնէ Միացեալ Ընկերութեան տրամադրութեան տակ: Ժողովին ներկայները մեծ գոհունակութեամբ ընդունեցին այս քաջալերական յայտարարութիւնը եւ շնորհակալութիւն յայտնեցին:

(Մանղումէ)

**Ա.Չ.Գ.Ա.ՅԻՆ**

**ԼՈՅՐԵՐ**

**ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԳՈՐԾԵՐԸ**

Եգիպտոսի Գեր. Առաջնորդը, Աղեքսանդրիոյ Թեմական Երեսփոխանութեան եւ նոյն թեմի Երազար. Ժողովոյ Դիւաններուն հետ միացած՝ պաշտօնական գրութիւն մը ուղղած է Պատրիարքական Տեղապահ Բարձրաշնորհ Տէր Եղիշէ Սրբազան Արքեպիսկոպոս Դուրեանին, եւ այդ նամակով Աղք. Կեղբ. վարդապետական Պատկ. խանդավառ սեղանին վրայ կը դնէ խնդիրներ՝ որոնք ձեռնուց առած են ժամանակէ մը ի վեր Աղեքսանդրիոյ մէջ անվերջանալի օրէն յուզուած ընտրական պայքարներէն . . .

Աղեքսանդրիոյ Օրաթերթին 116 թիւին մէջ վերադրուելու նամակը ամբողջովին հրատարակուած է:

Մենք բնականաբար չէինք կըրնար արգիլել Գեր. Առաջնորդը եւ թեմականները այդ ոճով նամակ մը չգրելու, եւ ոչ ալ իրաւունք ունէինք պահանջելու որ անոր հրատարակութիւնը զանց առնուէր:

Բայց քանի որ հանրութեան ուշադրութեանը յանձնուելու համար հրատարակութեան արուած է այն. « մենք լուեկայն կրնանք բովանակել թէ՛ Առաջնորդը եւ ժողովականները ամբաստանուներ են, եւ Ն. Վ. Բարթող բաշա ամբաստանեալ իսկ մեզի պէս բաղմամբ ըն-

թեցողներն ալ դատաւորներ. ուստի՝ առանց այլ ևս սպասելու որ Աղք. Կեղբ. վարդապետական Պատկ. խան ժողովը իր վճռական որոշումը տայ, մենք ալ մեր կարծիքը կը փութանք յայտնել վերոյիշեալ նամակի պարունակութեանը մասին:

Մեր սեղմ էջերուն մէջ կարելի չ'պիտի ըլլայ պաշտօնագրոյն ամէն կէտերուն վրայ մանրախոյզ ակնարկներ նետել, սակայն անոնցմէ մէկ երկուքը՝ որ բուն խնդրոյն հիմը կը կազմեն, կուզենք որ այդ նամակը կարդայողները զիտանան: Կը փափաքինք մանաւանդ՝ որ Պատրիարքական Տեղապահ Սրբազանը, Աղեքսանդրիոյ այդ գիմումին նուրբամար որոյման մը յանգեալ է զայն հազարգազրելէ առաջ, մեր այս քանի մը տաղերը նկատողութենէ չ'վրկուցնէ:

Կը յուսանք . . . Աղեքսանդրիոյ գործերուն, դարձուածքներուն, անձերուն եւ գործելակերպերուն « Արշալոյս » շատ մօտէն տեղեակ ըլլալու առիթներ ունեցած է, տարիներով պաշտօնական թերթը ըլլալով Աղեքսանդրիոյ նախկին Խորհուրդներուն, երբ նոյն իսկ Ն. Վ. Պոլսոյ բաշա կ'առնանագրուէր՝ եւ Աղեքսանդրիոյ Խան Դատարանաց արժանընտիր դատաւոր Ն. Վ. Կարապետ պէյ Լէիլիան կը վարէր թալալին գործերը:

Ըսինք որ վերոյիշեալ նամակին մէկ երկու մասերով միայն պիտի զբաղինք. աստիք հետեւիներն են. Առաջնորդ. Երեսփոխ. ու Գաղ. Ժողովոյ Դիւանները իրենց ոչ-ամբողջ լիազօրութեամբ, ճիւղ մը ունին հաստատելու թէ՛ Վ. Բարթող բաշա, իր իբր թէ միապետական գաղափարներով եւ գործունէութեամբ, թեմական ժողովներուն գործերը եւ թեմական տառանակը վիճակի մը կը ժամանէ: Ճշմարիտ չէ՞ այս:

Սակէ առաջ արդէն ներկայացու առիթը, որ պէտք ունեցանք յայտարարելու թէ՛ Բաշան օրինաւոր ժողովի եւ Սահմանադրութեան անկեղծ գործադրութեան կուսակից է: Այս յայտարարութիւնը՝ մեր վստահութիւնը լի ու լի գրաւած անձերու կողմէ քաղած էինք եւ ո՛չ թէ մեր քակէն կը հանէինք: Ի վերջոյ Աղք. Կեղբ. Պատկ. Խան ժողովին որոշումներն ալ մեր ըսածները կը շոյափէին:

Բայց ի՞նչ ըսենք մեր համայնագէտ(1) եւ համակերպող Առաջնորդին, որ բաշան առաւել ևս վըշտայնելու համար կառավարութեան կը գիւժէր, բաշային դէմ գանդաւելու համար թէ՛ դոյքերը չի յանձնենք, չենք զիտեր որո՞ւ ազգեցուցութեան ներքեւ սղբը եւ ազգային իշխանութիւնները մինչև այդ առտիճան վարկաբեկող գիմում մը կը ներ. . . Ամօթ չէ՞ր այս:

Արդարեւ՝ թեմական նորընտիր ժողովներ՝ միասին ունենալով Տ. Մկրտիչեան ալ, վստահելի անձերէ կը բաղկանան, ատոր ըսելիք չունինք: Սակայն կատարուած ընտրութիւնները օրինական չեն. մասնաւոր հիմայ որ Օամ. Սահմանադրութիւնը հաշկուեցաւ ա՛յնչափ մեծաշունթ, ա՛յնչափ աւետաբեր ու երկանկարեւ: Ինչո՞ւ մենք մեր Սահմանադրութեան պարզեւթ առաւելութեանց շլատուր առաջ բերելու առիթներ պիտի ստեղծենք Ն. Վանմ. Բարթող բաշայի առարկութիւնները ճիշդ են՝ երբ գրած է Կեղբունի թէ՛ « Աղեքսանդրիոյ հաստատութեան կարեոր մէկ մասին կողմէ Կեղբունից Եգիպտոս հայ գաղութին համար դժուած օրէնքին դէմ բուն բողոք բարձրացած է յատուկ հանրագրութեամբ մը մեզի գիմում եղած է ևլն »:

Թեմական ժողովոյ ընտրութիւնները կատարուեցին թիչ յետոյ, անհամար բողոքներ տեղացած են

«Արշալոյս» ին՝ բառաճանաչ ապօրինու-  
թեանց դէմ՝ բայց «Արշալոյս» ա-  
նոնցմէ մէկ երկուքը միայն հրա-  
տարակամ է, նկատելով որ ընտ-  
րութիւններն Օրմանեան Սրբազանի  
վարչութեան օրէն մասնաւորապէս  
պատրաստուած ծրագրի մը հիմանց  
վրայ կատարուած են, ն. Վսեմ.  
Պօղոս բաշայի հսկողութեան ներ-  
քէ : Եւ որպէսզի բոլոր նամակա-  
դիրներուն գոհացում տուած ըլլայ,  
Խմբագրութեան անդամներէն «Մե-  
նիկ» այդ նամակներուն ամփոփոյ-  
րը ըրած է երեք յօդուածներու  
մէջ, և ն. Վսեմութեան ուղարկու-  
թեանը յանձնած է ըստ քի մը ձևով :  
Այն ատենուան տիրող հանգամանք-  
ները ասկէ աւելին ընելու թոյլ չէին  
ասոր արդէն : Ասկէ զատ ընտրու-  
թիւնները կաշկանդող պայմաններու  
մէջ տեղի ունեցած են. այս ալ ստոյգ  
է. և ատոր հսկողութեան հաստատելու  
համար Առաջնորդի և Ժողովականաց  
ջանքերը թուղթի վրայ մնալու դա-  
տապարտուած պէտք է ըլլան :

Եթէ կաշկանդող պայմաններու  
ներքէ չէր, Խնչպէս կարելի էր  
որ 175 ընտրողներ միայն մասնակ-  
ցէին Խեմական ընտրութեանց, և  
այս մասին առ նուազն 20 է աւե-  
լի բողոքի գրութիւններ ալ հասած  
են մեզի իր ժամանակին ընտրական  
իրաւունքէն զրկուածներու կողմէ,  
որոնք յարգելի անձնաւորութիւններ  
են :

Աղէքսանդրիոյ ընտրողներուն  
թիւը 1903 ին 800 է աւելի էր :  
Թուղթի վրայ յատկապէս տպագրու-  
ած 3-4 տարի յետոյ՝ այդ թիւը  
փոխանակ նուազելու՝ աւելնալու էր :  
մինչդեռ Առաջնորդ հօր Պատրիար-  
քարանի ուղղած նամակին մէջ այդ  
թիւը 400 կը ներկայացնէ, որոնց  
մէջէն կը կրկնենք թէ 175 հոգի  
միայն մասնակցած են : Արդեօք  
Գեր. Առաջնորդը զիտակցաբար...  
սխալումով կը ներկայացնէ վերոյիշ-  
400ը, ինչ որ ճիշդ չէ :

Ատոնցմէ վերջին է որ Առաջ-  
նորդ և Խեմական Ժողովոց Դիւան-  
ները քաղութիւնը կունենան իրենց  
հարուածները ն. Վ. Պօղոս բաշայի  
դէմ դարձնել, անոր վերադարձի  
յապարհամը ընթացիկ գործերուն ի-  
բրը արգելք ներկայացնելով :

Սա ստոյգ է թէ՛ Պօղոս բաշա  
Աղէքսանդրիոյ վարչական Ժողովոց  
մէջ պաշտօն չունի : Բայց իրենց  
ո՞վ ըսած թէ Պօղոս բաշան էր ու-  
զուր, որ այդ ընտրութիւնները ի-  
րեն հսկողութեանը ներքէ կատար-  
ուին :

Կը մուցուի՞ որ Պատրիարքա-  
րանի կողմէ քանիցս եղած դիմում-  
ներուն հաղիկ ուրեմն տեղի տալով,  
չուղիւղով յանձն առաւ այդ հսկո-  
չութիւնը, Հսկողութիւն՝ որուն ի  
յարգանս շատ մը ընտրողներ իրենց  
իրաւունքները զահեցին, որպէսզի  
բաշան չի վշտանայ : Եւ այդ էր պատ-  
ճառներէն մէկն ալ որ արդի թե-  
մական երեսփոխանութիւնը ցանցա-  
ռաթիւն քուէարկուներով կատարուե-  
ցաւ :

Ինչ որ ալ ըլլայ սակայն, թե-  
մական Ժողովները թող մեծապէս  
գոհ մնան որ Պօղոս բաշա հսկեց ու  
իրենց ընտրութիւնը զլուս ելաւ...  
հիմայ՝ դէ՞ թէ իբր երախտագիտական  
պարտականութիւն պէտք է որ ն.  
Վսեմութեան գալուն սպասեն, որ-  
պէսզի սա նորոյիմակ ծրագիրը կամ  
Հրահանգը մէջ տեղէն վերցուի, Սահ-  
մանադրութիւնը հոշակաւ և նորոգ  
ընտրութիւններով Աղբը դարձնալ  
զիրենք պաշտօնի կոչէ : Ասիկայ է  
ամենէն կարուկ ճամբան. տարբեր  
կերպով վարուել թէ՛ Ժողովակա-  
նաց, թէ՛ Առաջնորդին և Ժողո-  
վորդին անհանգստութիւն կրնայ  
պատճառել : Գոնէ մենք այսպէս  
համոզուած ենք... :

Առ այժմ այսչափ :

ՎԵՐԱԳՆԱԲԵՐ  
— Հ. Բ. Ը. Միութեան փոխ-Ա-  
տենապետ Վսեմ. Երուանդ Արաթօն  
Պէյ վերադարձած է իր ամառուան  
ուղեւորութենէն : Վ. Աղաթօն պէյ  
բաւտարիկներու արձակուրդ լը-  
սելուն պէս 2000 զրշ. զրկած է  
կատրիարքական Տեղապահ Սրբա-  
զանին, որպէսզի բաժնէ զայն զբ-  
բազր բանտարկեալներուն :

ՆՇԱՆԱՌՈՒԹԻՒՆ  
— Ն. Վ. Պօղոս բաշա նուպար իր  
երկրորդ որդին Ջարեհ պէյ նու-  
պարը նշանած է Օրիորդ Անահիտ  
Բօրթիկալի հետ :

Օրիորդ Անահիտ Գուսարն է  
Ն. Վ. Միքայէլ բաշա Բօրթիկալի :  
Շչանախօսութիւնը տեղի ունե-  
ցած է Էվրանի մէջ :

— Ազն. Առաքել պէյ նուպար  
անցեալ օր քաղաքս ժամանեց :

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ  
— Ն. Վ. Պօղոս բաշա նուպարի  
յանձնարարութեամբ, Հ. Բ. Ընդ.  
Միութիւնը 100 ոսկի զրկած է Պիթ-  
լիս անդրոյն կարօտեաններուն բաշիւ-  
տելու համար :

Պիթլիս այս առաւելութիւնը կը  
վայելէ՝ որովհետեւ հինգերորդ ա-  
ռաքումն է այս Տեղոյն Անդլ.  
Հիւպատոսարանի հայթարգ մանկի ա-  
նուղակի ջանքերուն շնորհիւ : Ա-  
րար ևն որ Պիթլիս այդպիսի սղա-  
խօս և բանիւրուն երիտասարդի մը  
և անշուշտ ուրիշներու ալ ներկայու-  
թիւնը կը վայելէ :

— Կարձեալ՝ Հ. Բ. Ը. Միու-  
թիւնը 10,000 զրշ. արձանագրու-  
ած է Պօղոս Միացեալ ընկերու-  
թեան :

— Հոս՝ տեղն է որ կրկնենք թէ՛  
տարեկան 10,000 զրշ. ալ Ն. Վ. Աբ-  
րահամ բաշա Բարթող արձանագրու-  
ած է Միացեալին :

Բայց չենք զիտեր ինչու «Ա-  
րեւիչը» իր Սեպտ. 4 ի թուոյն մէջ  
յորում «Արեւ» ի անվայել բառերով  
խճողուած մէկ յարձակողական կտորը  
ընդօրինակած էր, անկէ քանի մը  
սող անդին տարեկան 2500 ֆրանդ  
Միացեալին նուիրող հայուն հասցե-  
ին ուղղուած անարդանքի մօտերը,  
անոր՝ այսինքն Բարթող բաշային ա-  
ռատածնունդութեան մէկ նմոյշը յան-  
ուանէ յիշատակելով «Արեւիչը» ըն-  
թերցողներուն գիտցնելը անպատեհ  
նկատած էր... :

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍԾ**

Երկր. շարժի՞ Ս. Խաչի մեռե-  
լոցին առթիւ, Մարմինայի Աղբ-  
գերեզմանատան մէջ յատուկ պաշ-  
տօն կատարուեցաւ Մեծ. Տիարց  
Ն. և Ա. Հաճաթեան եղբայրներու  
հանգուցեալ մօր՝ Տիկին Իսկուհի Մ.  
Հաճաթեանի և վաղա՛ւեակ Ծահէն  
Ա. Հաճաթեանի գերեզմաններուն  
վրայ :

Եկեղեցական դասը ամբողջու-  
թեամբ մասնակցեցաւ արարողու-  
թեանց :

Այս առթիւ տեղի ունեցաւ նաև  
բացումը Հաճաթեան եղբայրներու  
մօր և թոռան յուշարձանին, որ ըն-  
տիր կրանիթէ կերտած էր կառավա-  
րական արձանագործ Պ. Անթոնիօ  
Բարաոս, և իր արուեստին ամեն  
նրբութիւնները փայլեցուցած էր  
յուշակերտին վրայ այնպէս մը՝ որ  
անկարելի է իսրհրդաւոր չ'անուա-  
նել զայն :

Տիարք Հաճաթեան եղբայրք դէ-  
պի իրենց մայրը զգացած խանդա-  
ղատանքին ուժգնութիւնը այլապէս  
ևս արտայայտելու համար, իրենց  
զգացումներուն միացուցած էին դա-  
ռան մը զնհարբութիւնը :

Ներկայք՝ մանաւանդ մատաղա-  
սէրները վայելելով գառնուկը, օրհ-  
նեցին Հաճաթեան եղբայրները,  
օրհնեցին Պարզ և ատուն՝ որ հայու-  
թեան արժանաւոր զաւակներ տը-  
ւած է :

Աղէքսանդրիոյ անուանի վա-  
ճառականներէն փոխան ծաղկե-  
պսակի նուիրատուութիւններ ըրած  
էին Արարիկի սովեւրոց Յանձնա-  
խումբին, զոր պիտի ծանուցանենք  
առաջիկայ թուով :

Պարզ արձանագրութիւն մը քան-  
դակուած էր յուշարձանին վրայ,  
որ ամեն բարեգութիւններէ շատ ա-  
ւելի պերճախօս է և հետեւեալն է :

ԱՍՏ ՀԱՆԳՉԻՆ ԻՍՎՈՒՂԻ Մ. ՀԱՃԱԹԵԱՆ  
ԵՒ ՎԱՂԱՄԵՌԻԿ ԹՈՒՆԻԿԸ  
ՇԱՀԷՆ Ա. ՀԱՃԱԹԵԱՆ

**ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ  
ՅՈՒՅԱԿ. Դ.**

Գումար Ա. Բ. և Գ. ցուցակնե-  
րու 5052 զրշ 20 փրյ

Տ. Սաչիկ Պէրպլեհանի Դառնա-  
ղէտ մասնուան առթիւ փոխան ծաղկե-  
պսակի, Աղբատաց Հողարարութեան  
կողմէ նուիրուած Արարիկի կարօտելոց  
200, Տ. Տ. Տիրան Փիլիպոսեան 195  
Գրիգոր Գարակիւեան, 97 զրշ. 20 փրյ,  
Յակոբ Սարգիսեան 48 զրշ 30 փրյ.  
Աւետիս Սուվալեան 40, 4-4. Մես-  
րոպեան 40, Մկրտիչ Թէվէթեան և  
Արշալ Կարապետեան 40, Տիգրան Եպի-  
փանոսեան 30, Գրիգոր Միքայիլեան 20,  
Ռուբէն Էթէքեան 20, Ալֆրէտ Մասօն  
20, Գուրգէն Մէրիճեան 20, Կարա-  
պետ Երզնկացեան 20, Գ. Մարգարե-  
ան 20, Գրիգոր Տէմիրճեան 20, Աւե-  
տիս Գարակիւեան 20, Սարգիս Երամ-  
եան 20, Գրիգոր Տէմիրճեան 20, Աւե-  
տիս Գարակիւեան 20, Սարգիս Երամ-  
եան 10, Ռիմ 10, Կարապետ Յով-  
հաննէսեան 10, Յովհաննէս Մանուկ-  
եան 10, Չարաք Տէօփէթեան 10, Ռիմ  
10, Արամ Արամօֆ 10, Դեռնիկ Եկա-  
եան 10, Յարութիւն Սեւուկեան 10,  
Գ. Սէթեան 10, Եփրեմ Պալպալեան 10  
Ռիմ ձեւամը Մ. Օտապոյեանի 10, Սար-  
գիս Բիչիւքեան 5, Ռիմ 5, Վրիպակ-  
ներէն 21 զրշ 10 փրայ, Գումար 6180  
Վրիպակ

Բ. ցուցակին մէջ նշանակուած 50  
զրուշը փոխանակ Սարգիս Շարապեան  
ըլլալու, պէտք է կարգող ԱՐՄԵՆԱԿ  
ՄԱՆՈՒԹԵԱՆ 50 :

Թողութեան փոխանակ 50 զրշ՝ 48 զրշ  
30 փրայ նշանակուած էր, տարբե-  
րութիւնը վրիպակ նշանակուած է :

Ազն. Պետրոս Էֆ. Կարապետեանի  
կողմէ զրկուած 1950 գումար 8150

**ՆՅՈՒԳԻՐ**

— Պէրլին 23 Սեպտ. — Պուլկարնե-  
րը արեւելեան երկաթուղոյ գծէն մաս  
մը գրաւած ըլլալուն համար, Թուր-  
քիոյ հետ յարարութիւնները շատ  
ձգտած են :

— Սօֆիա 24 Սեպտ. — Թուրք կա-  
ռավարութիւնը բողոքագրով մը կը պա-  
հանջէ որ Պուլկար հողին վրայ գրաւ-  
ուած երկաթուղոյ գիծը անմիջապէս  
վերադարձուի :

— Պոլիս 25 Սեպտ. — Սուլթանը Պ.  
Ռալին ընդունեց, Տեսակցութիւնը սի-  
րալիք եղաւ :

— Կ. Պոլիս 26 Սեպտ. — Բ. գու-  
ռը զեկուցագիր մը զրկեց Մեծ Տէրու-  
թեանց, ծանուցանելով թէ՛ Արեւել-  
եան երկաթուղոյ գծին Պուլկարիոյ  
կողմէ գրաւումէ, Թուրքիոյ իրաւանց  
բանաբարում է, և անոնց միջամտու-  
թիւնը խնդրեց :

— Կ. Պոլիս 27 Սեպտ. — Թուրք  
պաշտօնական շրջանակներու մէջ Պուլ-  
կարթուրք միջադէպին մեծ կարեւո-  
րութիւն չընծայուի, և կը կարծուի  
թէ համաձայնութեան մը պիտի յանգին :

— Աթէնք 28 Սեպտ. — 1400 յոյներ  
Պոլիս մեկնեցան եւ պիտի ընդունուին  
Թուրք Գոմիթէին կողմէ :

— Պոլիս 28 Սեպտ. — « Ենի կա-  
զէթա » կը հերքէ այն լուրը թէ՛ Սուլ-  
թանին և Սալիկին մէջ ցրտութիւն մը  
զոյուութիւն սկսեցած է :

— Լոնտոն 28 Սեպտ. — Մեծն Բը-  
րիտանիա Պուլկարիոյ ծանոց թէ՛ Ա-  
րեւելեան երկաթուղոյ գրաւումը ա-  
նարգարանալի կը նկատէ :

Սօֆիա 28 Սեպտ. — Աւստրիա և  
Դերմանիա Արեւելեան երկաթուղոյ մէջ  
տեղի ունեցած ոտնձգութեանց դէմ բո-  
ղոքած են :

**ՍԵՂԱՆՍԻՈՐԱԿԱՆ ՏՈՒՆ**

—  
Մուսի փողոց թիւ 6, Սիմիլիքի մասնա-  
ձիւղին քով, Ժիւսիքի դիմաց :

Կը գնէ և կը ծախէ հրապարակի  
վրայ շրջաբերող բոլոր կարեւոր արժե-  
թղթերը, մասնաւորաբար Գրէտի Ֆօն-  
սիէի հին և նոր, Բուժէլիի երկաթուղ-  
եաց և Բանամայի ֆրանսական վաւե-  
րացնալ արժեթղթերը, որոնց սկզբէն  
ց'այսօր շահող թիւերուն ցուցակներն  
ալ ունի :

Արժեթղթերու արդի խիստ նպաս-  
տաւոր գններէն կրնան օգտուիլ Եղիպ-  
տարեանկ մեր ազգայինները մեզի զի-  
մուով :

Մասնավճարներով — 25, 50, 100-  
կարելի է արժեթղթերու տիրանալ, և  
մասնակի պայմաններով՝ աւանդի փո-  
խարէն՝ փոխառութիւններ կ'ընէ :

Սեղանաւորական ամեն տեսակ  
զործանութեանց, և առեւտրական  
ամեն կարգի Պոնտիք զեղջիւղու պատ-  
րաստակամութիւն :

Սեղանաւորական և Պօրսայի գոր-  
ջանութիւններ և ա'յս կարգի գոր-  
ջերու վերաբերեալ գաւառներէն եղած  
խանձարարութիւններ փութով կը կա-  
տարուին :

Բուժէլիի երկաթուղոյ վիճակա-  
հանութեանց պանդ Օթօմանէն երաշ-  
խաւորեալ և վաւերացեալ քուս կ'ունի  
գնել ուղղողներուն համար՝ լաւ պատե-  
հոթիւն մ'է մեզի դիմելը, որովհետեւ  
պանդ Օթօմանէն ուղղակի կտտանաք  
իշխալ քուսկները :  
12-50  
ԱՐՄԵՆԱԿ ԹՄՇԵԱՆ

**ՎԱՐԴ ԵՒ ՉԱՐԴ**



ՅԻՎԻՆ ԼՈՒՍԻԵ Գ. ԶՈՒԱՔՈԾ

ՄՈՒՍԻԿԱԿԱՆ ՏԱՐԻՉԵՏԻՆ  
ԼԱՏԻՆԱՅ ԵՆԵՂԵՑԻՈՅԸ  
ՃԻՇՏ ԴԻՄՍՃԸ  
ԱՐՄԵՆԱԿԱՆ ՏԱՐԻՉԵՏԻՆ  
**ԱՐԵՆԵՑԸ**  
Հարանեկան գե-  
ղակազմ՝ արդիներու,  
չեղ ծաղկեկողմեքու,  
պսակներու և բեղոյրի

(չախա) հրաշալեղ ծաղկներ ունենա-  
լու համար մի դիմէք այլուր :

Մեր գիւնը զիւրաւապէս ին և  
ապրանքները անմրցելի :

Փորձի համար անգամ մը այցելու-  
ղը, ապահովապէս մեր մնայուն յաճա-  
խորդը պիտի ըլլայ :

Մեր տարեկան փորձառութիւնը  
այսպէս ըսել կուտայ մեզի :

31-43 ՏԻՎ. Լ. Գ. ԶՈՒԱՔՈԾ

**ԼՐԱՎՔԱՂ**

ՊՕՄԱՅԻ ԹԵՐԹԵՐԵՆ

ՀՐԱՆԻ (Մելքոն Կիւրճեան)  
«Արեւելք» միջոցաւ բաց նամակ  
մը կուղղէ Ն. Վ. Պօղոս բաշային  
և գաւառի հայութեան համար յար-  
մարագոյն կը նկատէ, զարտիչու  
Հ. Բ. Ը. Միութեան գանձը՝ մին-  
չև վերջին լուծան :

Պ.Պ.Ս.Հ կը գրէ թէ՛ Անդրիոյ  
Վեհապետին կողմէ կայսեր ծննդեան  
տարեդարձին առթիւ քաջուած սի-  
րալիք և իմաստալից հեռագիրը,  
յիշեալ Վեհապետին և Բրիտանա-  
կան Աղբին՝ այժմ մեր Օսմ. Աղ-  
բին նկատմամբ տածած անկեղծ ըլ-  
գացումներուն փայլուն ապացոյցն  
է :

— ՕՍՄԱՆԵԱՆ պանդայէն կըն-  
քուելիք 3, 600, 000 ոսկի փոխա-  
ռութեան գործողութիւններուն կա-  
տարմանը մասին կայսերական իրա-  
տէն շնորհուած է :

— ՊՈՒԼԿԱՐԻՈՅ Մայրաքաղա-  
քին պաշտօնական շրջանակներուն  
մէջ կ'ըսուի թէ՛ Պուլկարիա պիտի  
պնդէ վաղեմի յարաբերութեանց վե-  
րահաստատման վրայ : Պատերազմի  
հաւանականութիւններ կան :

— ԻՄՐԱԳՐԱԿԱՆՈՎ մը կը հեր-  
քէ Սալպահ՝ Գումար-Գաբուի մէջ Հայ-  
կական գրօջ պարզուած ըլլալու մա-  
սին եղած է երկակայան և ցնո-

# ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻՍԱԽՈՏԻ ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷԻՅԷ



## ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՔԱՐԲ

ՅԱՏԿԱՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է :

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածանց գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՛ պէտք է նախընտրել մեր վաճառատունը :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարետներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հաս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատունը :

Պարսկական ամենաընտիր թէմպէթիկ այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալի է :

Մեր վաճառատունը վերջապէս, զինքնու ածանուծեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրրստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՔԱՐԲ

րական շուրթերը, ու կը յաւելու թէ գրոջ ըստածը Հայ Գործիքներու խորհրդանշանն է, ինչպէս կ'ունենան սպորդի ակումբները, շոգենաւային և զանազան ընկերութիւններ :

ԱՐՏԱՌԻՆ Գործոց նախարարութիւնը գիմուսներ ըրած է որ նախապէս Ռուսիա և Ամերիկա գաղթող Օսմանցիները որոնք ժամանակին այդ երկիրներուն հպատակ կը սեպուէին, այլ ևս օսմանցի համարուն, քանի որ իրենց հայրենիքը կը վերադառնան :

### ՆՈՐԱՏՈՒՆԿԱՆ ԷՖ .

Տեղական թերթ մը կ'ըսէ թէ՛ Առևտրական պաշտօնարանի բակին մէջ, պաշտօնեաները ցոյց մը ըրեր են Նորատունկեան էֆ . ի դէմ, Հայերուն շատ երես տալուն պատճառաւ :

ՍՊԱՌՆԱԼԻԲ . Թուրք լրագիրներու մէջ կը կարգանք թէ՛ կը գրէ Արևելք, առտուն, Այասօֆիայի, Սիւլէյմանիէի ու Պայազիւի միկիթներուն պատերուն վրայ ձեռագիր թուղթեր փակցուած էին, որով անարգական բառերով կը յայտարարուէր Շէյխ-իւլ-Իսլամ էֆ . ն որ՝ եթէ 3 օրէն չի հրատարի, մահուան պիտի դատապարտուի : Ոստիկանութիւնը իմանալով իսկոյն հաւաքեց այդ թուղթերը և քննութեան ձեռնարկեց :

Իգտալ կ'ըսէ թէ . հեղինակները չարն ու բարին զանազանելու անկարող սգէտ անձինք ըլլալու են, քանի որ այդքան անարգական պարունակութիւն ունեցող թուղթեր կը փակցնեն նոյնիսկ հաստատութեանց գուճներուն վրայ :

ԵԼՄՏԱԿԱՆ . Նախարարութիւնը չըջաբերականով մը ծանոյց ամեն կողմ որ Հայցոյ մեծածններու և ողջ կամ մեռած ըլլալին յայտնի չեղածներու տուրքերը և պարտքերը մնացած ժողովուրդէն չի պահանջուին :

ԴԱՏԱԿԱՆ նախարար Վ . Հասան Ֆէհմի բաշա, Ալլա . Պատրիարքարանի գործակատար Գամէր էֆ . Շիրինեանը իր քովը կանչելով, ի մէջ այլոց՝ խնդրած է որ Պատրիարք . Տեղապահ Սրբազանը յորդորներ կարգայ ժողովրդեան, սրպէսիկ խոհեմութիւնը և զգուշութիւնը ձեռքէ չի ձգէ և իր գործերովը պարզի : Ն . Վ . յայտնած է նաև թէ՛ իմացուած է որ Յեղափոխականներ մեծ թուով Պոլիս լեցուած են շատ մարդիկ կը կոչեն Պոլիս և կը զինեն զանոնք : Այսու հանգերձ կը յաւելու Ն . Վ . թէ՛ ինքը ո՛ր և է գիտողութեան համար չէ որ կ'ըսէ այս խօսքերը, այլ անոր համար որ անմեղ ժողովուրդը զինուած ըլլալով, մի՛ գոցէ շարամիտներու պղտիկ գրգռում մը կարենայ անպատեհութեանց դուռ բանալ և թէ՛ իր փախաքն է որ Տեղապահ Սրբազանը այս մասին ևս պէտք

եղած յորդորները ուղղէ ժողովրդեան :

Գործակատարը պէտք եղած պատասխանները տուած է այս մասին : ՊՍՄՈՑ ՄՍՄՈՒԼԸ

«Մանգուձէ» կը գրէ . «Մամուլի ազատութիւնը այլ ևս կարելի է ծաղրելի բացատրութիւն մը նկատել շնորհիւ Բերայի դատարանին ... լուսամտութեան :

Երէկ հին օրերու մնացորդ այդատեանը երեքական ոսկի տուգանքի դատապարտեց Մաղիկի արտօնատէր Սադաեան, խմբագրապետ Թորոսեան, և Կարոզի խմբագրապետ Թօլայեան էֆ . ները, որովհետև Տաճար վրդ . ի համար խաւթի բաժէին և ապացուցած էին անոր խափէութիւնը ...

Այս վճիռը մեծ զայրոյթ պատճառած է և կասկածի տակ կը ձգէ արդարութեան գործը Թուրքոյ մէջ : Դատապարտուածները վերաքննութեան դիմեցին :

Վտտահ ենք որ վերաքննիչատեանը արդարութիւնը կը ճանչնայ և թող չի տար որ հանրաձայնօթ սրիկաներ ելլեն ժամուրն ազատութիւնը բռնաբարեն, յենլով օրէնքին չես գիտեր ինչ տեսակ մէկ սրամազրութեան վրայ :

### ԱՐՇԻԻ

Ազգային, Գրական, և Բարգաթական կիսամսեայ հանդէս, որ կը հրատարակուի ամէն ամսոյ 1 ին և 16 ին : Տարեկան բաժնեկրին է արտասահմանի համար 7 ֆրանք, վեցսահմանի համար 4 ֆրանք բացարձակ պէս կանխիկ :

«ԱՐՇԻԻ» ը Ամերիկայի ամենէն անկախ անաչառ և անվախ հանդէսն է, որուն խմբագիրը, միս մինակ, կրցաւ արտասահմանական յեղափոխութիւններ և դրամաշարժներ քողարկելու ջանքովը :

«ԱՐՇԻԻ» ը շարունակ կը հրատարակէ գեղեցիկ բանաստեղծութիւններ, ու Եւրոպական գրականութեան հոյակապ նորաձեւեր : Իր թիւ ժ . էն սկսեալ կը թարգմանէ «Եսթեր» անունով հայկական վէպ մը, որ 1901 ին լոյս տեսած է Անգլիոյ մէջ : Հեղինակը, Վարդենի կեղծանունով, մօրը կոչմէն անդէսի, հօրը կոչմէն հայուհի մը, ակնատեսն զած է 1896 ի կոտորած ին զոր նըկարագրել կը ջանայ անոր ամբողջ արտակերպութեամբը : Վէպին հերոսը անհաս մը՝ կամ ժողովուրդ մը չէ, այլ Սոլթմանի արիւնապետութեան կարմիր Արհաւիրքը :

«ԱՐՇԻԻ» ի բաժանորդագրուիլ ուղղորդել յի գիմեն խմբագրութեան կամ ուղղակի իր հասցէին :

Editor of ARDZIV  
P.O.Box 2285 Boston - Mass.  
Յ . Գ . Աղաթիկ ապսպրանքներու շարքութեան չեն առնուիր :

## ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿՈՅՑՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԻՆԿԷՐ

Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց . Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԳԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՄԻՆԿԸՐներն են ևւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :


400 և աւելի վիսյակակ եւ մեքայներով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ :

### ԱՄԵՆԸՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերակամ արուեստանախնդիսին մէջ usացած է . ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԴՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՌՈՐԱԿԱՆ ԱՐԳՈՒՆԵԱՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԳՈՒՆԵՐԷՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԱՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՄԻՆԿԸՐ յաճկանչիմ



Գին ՉԱՓԱՒՈՐ

Ձրի դասեր և նորոգութիւններ, ՄԻՆԿԸՐ մեքենայից համար, յաճախորդատուներուն մէջ :

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

### ՕԹԷԼ ՏՐԱՊԻՉՈՆ

ԱՂԷԲՍԱՆԻՐԻՍ

Դանթօ, Սուրալ Մանկաի 3 Թէֆֆիեր-եջ-Բաշալանի փողոց 3 Մանկաի Մզկիթին դիմը 3 Թիւ 3

Պանդոկապետ - Մ . Գէորգեան

Կը յանձնարարուի արգոյ հասարակութեան և ի մասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեղծանը գտնուող և օղաւէտ դիւրքով սոյն պանդոկը, ուր յաճախորդները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն :

Դիմեցէք անգամ մը և դո՛հ պիտի մնաք :

Գինը չափաւոր են 28-55

### ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր արտասահմանի և եթովպիոյ բաժանորդներէն կը խնդրուի որ հաճին փութացնել իրենց բաժնեկրինները, նկատելով որ տարւոյն իններորդամիսը կը թեւակոխենք :

Այսպէսով մեր յարգելի բաժանորդները մեզի խնայած կըլլան մասնաւոր գիմուսներու առթիւ ըլլալիք ծախքերէն և ժամաւաճառութիւններէ :

### ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԵՏ ԱԼԻ, ՊԱԳ-ԷԼ-ԽԱԼԲ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ զբժին վրայ եղող նպարավաճառներուն մէջ, մեր վաճառանկրն միակն է որ ապրանքներու թարմութեան և մաքրութեան շնորհիւ մնալուն դիւրք մը բռնած է տարիներէ ի վեր :

Նպարեղիններու վերաբերեալ ամէն ինչ փոքր թէ մեծ քանակութեամբ գնողներու համար, անթերի են սոյն վաճառատեղոյն մէջ :

Մեր յաճախորդները զո՞ն թողելու նպատակաւ սպասուելի ապրանքներու ընտրութեան և զնուսին ասան շատ խնամք և նոյն իսկ բաժանորդութիւն կընենք : Աւրին նպարեղէնի վերաբերեալ ամէն սպրանք թարմ է ևւ մաքուր մեր քով :

Կչիւր, որուն համար ուրիշ շատ սեղեր գանգատանաց պատճառ տուած է, մեր քով գոհունակութիւն միայն առած է . վկայ մեր բազմաթիւ յաճախորդները, որոնք միշտ գո՞ն մնացած են :

Ձեր սուսին նպարեղէնի բոլոր պէտքերուն համար գիմեցէք ի Պագ-էլ-Խալբ մեր վաճառատեղին ևւ չ'պիտի զղջաք :

16-41  
ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍՍՐՁԵԱՆ